

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գլամուռնի հրաժարականը՝ Խտալիա, Ապստամբութիւն Սիցիլակում, Ալեցիլիակի սոցիալական և տնտեսական վիճակը, Կրիսպի'ի մինիստրութիւնը, Փինանսական և վարչական ռեֆորմների ծրագիրը, Լիազօրութիւնների խնդիրը:

I

ԳԼԱԴՐԱՏՈՆ

Մարտի 3-ը (նոր տոմար) 1894 մի նշանաւոր թւական է համարւելու Անգլիայի ներքին քաղաքական կեանքի պատմութեան մէջ։ Այդ օրը Անգլիայի grat older man (մեծ ծերունին) Վիլիամ Էւարտ Գլադրոնն ներկայացրեց Վիկտորիա թագուհուն իւր հրաժարականը առաջին մինիստրի պաշտօնից, որ և ընդունեց։ Գլադրոնը այդ ակտը կատարեց ոչ որպէս յաղթւած իւր հակառակորդների ոյժից, այլ ինքնաբերաբար, իրը մի ծերունի, որի 85 տարեկան հասակը իրան այլ ևս չէ ներում տանել Անգլիայի առաջին մինիստրի պաշտօնի ծանրութիւնը։ Նա հեռացաւ, երբ իշխանութիւնը իւր կուսակցութեան՝ լիբերալների ձեռքումն է, և հեռացաւ առաջին մինիստրի պաշտօնի համար թագուհուն առաջարկելով մէկին, որին նա իւր քաղաքական ժառանգն էր ընտրել— լորդ Ռողբերի'ին, արտաքին գործերի մինիստրին Գլադրոնի վերջին մինիստրութեան մէջ։

Մեծ ծերունին այդ պաշտօնական ակտով վերջ է դնում իւր քաղաքական ասպարէզին և հեռանում՝ մասնաւոր մարդու կեանքի անկիւնը մտնելու համար։ Ճիշդ է, նա դեռ մնում է համայնքների (պարլամէնտի պատգամաւորական) ժողովի անդամ։ Ճիշդ է՝ նա խոստացել է իւր աջակցութիւնը Ռողբերիին՝ ծանր րոպէնե-

բուլ, բայց Գլադատոնի քաղաքական կեանքի համար այնուամենայնիւ գիծը դորանով քաշւած պիտի համարել:

Զնայած որ մեծ հասակը և վերջերում աւելացած աչքի տկարութիւնը ինքն ըստ ինքեան փոքրիկ պատճառ չեն կարող համարել Գլադատոնի դործերով ծանրաբեռնւած մի քաղաքական դործիչ հեռանալուն, բայց հասակի վրայ անկասկած է որ ներկայ դէպօւմ աւելացել են այլ ծանրակշիռ հանգամանքներ Գլադատոնին դրդելու համար այդ քայլն անելու: Պէտք է ասած, որ իւր հրաժարականի օրերը Գլադատոնը առիթ է ունեցել պարլամենտում ճառախօսելու, և դէմքի զւարթութիւնը, ձայնի զիլութիւնը այնպէս են եղել, որ ծերունու առողջական դրութիւնը վկայւած է որպէս շատ բաւարար, ոչ պակաս քան վերջին տարիներս առհասարակ: Նա կարող էր յետ քաշել իւր պաշտօնից ծերութեան պատճառով, բայց միայն եթէ դորա վրայ գային ու աւելանային այլ ծանրակշիռ հանգամանքներ: Եւ այդ հանգամանքները իրօք կան: Եւ այդ նոր շառժառիթները այն բնաւորութիւնն ունեն, որ Գլադատոնի հրաժարականը դարձնում են մի նշանաւոր պատմական ակտ՝ կապւած անգլիական լիբերալիզմի աւպագայի հետ:

Գլադատոնը, ինչպէս ինքն էր ասել քսան ամիս առաջ և այդ ժամանակից դէս քանից կրկնել է, կառավարութեան զեկը իւր ձեռքն էր վերցրել՝ իւր քաղաքական դործունէութիւնը պսակելու համար իրլանդական ինքնավարութեան (հոմ ռուլ) դործը գլուխ բերելով:

Հետևապէս նա ներկայացրեց հոմ ռուլի օրինագիծը. համայնքների ժողովը, ինչպէս յայտնի է, ձայնիրի բազմութեամբ ընդունեց այն (տես «Մուրճ» 1893 թ. միացեալ № 7—8 էջ 1285): Բայց յայտնի է նաև որ լորդերի ժողովը, որի համաձայնութիւնը պահանջւում է ամեն օրէնքի համար, մերժեց իրլանդական ինքնավարութեան օրինագիծը ահագին մեծամասնութեամբ (տես նոյնտեղ, էջ 1286): Օրէնքով այն, ինչ մերժւում է լորդերի պալատում՝ կարելի է նորից ներկայացնել միայն մի տարուց յետոց, նախ համայնքների ժողովում, ապա լորդերի ժողովում, ինչպէս ամեն մի նոր օրինագիծ: Հարկաւ մի տարի սպասելը մեծ բան չէ մի այդպիսի մեծ դործի համար. բայց հանգամանքի ծանրութիւնը նրա-

նումն է որ լորդերի ժողովը գրեթէ գլխովին պահպանողական է և հետևում է լորդ Սոլսբրիին, որի բռնած դիքը դէպի իրլանդական բիլլը յացնի է: Հանգամանքի ծանրութիւնը նրանումն է, ուրեմն, որ լորդերի ժողովի ներկայ կազմը չի թույլ տալիս յուսալու թէ նա գալ տարի և մօտ ապագայում՝ կը փոխի իւր դիքը դէպի իրլանդական բիլլը:

Բայց միւս կողմից Գլադատոնը այն կերպ է դրել իրլանդական ինքնավարութեան խնդիրը և այնքան հաստատ քայլերով է տարել հասցրել նորան մինչ այժմ, որ վերադարձի մասին խօսք անգամ չի կարող լինել: Իրլանդական բիլլը անցողական խնդիր չէ, նա անպատճառ պէտք է իրագործւի. դա արդէն պատմական անհրաժեշտութիւն է, և այնքան մեծ՝ որ եթէ որ և է կողմից նա հանդիպի ամուր պարսպի՝ հարկ կայ այդ պարիսպը քանդել:

Իսկ այդպիսի մի պարիսպ է ներկայացնում այժմեան լորդերի ժողովը: Հետեւապէս պէտք է քանդել վերջինս, գոնէ նորա ներկայ կազմը: Ահա այն եղրակացութիւնը, որին հասել է լիբերալ կուսակցութիւնը և յատկապէս Գլադատոնը:

Լորդերի ժողովի անյաղթելի կամակորութեան նկատմամբ Գլադատոնը համոզւել է նաև այլ իրողութիւններով, պարլամէն տական անցած շրջանի ընթացքում: Լիբերալ մինիստրութիւնը հանդիպեց խիստ ընդդիմադրութեան նաև համայնքների ինքնավարութեան նոր ծրագրի խնդրում: որպէս նաև բանսորների ապահովացման օրէնքի նկատմամբ: Լորդերի ժողովը աշխատեց այդ օրէնքների էական մասերի զօրութիւնը ի:իք դարձնել: Լորդերի պալատը, սակաւ անդամների բացառութեամբ, սիստեմական ընդդիմադրութիւն է ցոյց տալիս լիբերալ մինիստրութեան, ունենալով իբր պարագլուխ լորդ Սոլսբրիին:

Այսպիսով ահա Գլադատոնը պէտք է միտք յղանար լորդերի դէմ ահեղ պատերազմ սկսել: Ինչով նա կարող է աղդել նոցավրայ, եթէ ոչ սպառնալիքով լորդերի պալատը (ժողովը) ջնջել:

Սկսած 1832 թւականից, երբ կատարեց անգլիական մեծ ռեժիորմը, որով անդիմական արիստոկրատիան՝ օրէնադրութեան գործում կորցրեց իւր նախկին իշխանութիւնը, այդ ժամանակւանից սկսած լորդերի ժողովը ծառայում էր իբր մի մեղմացնող օրգան,

իրան հաւասարապէս հեռու պահելով մեծ կուսակցութիւնների բացառիկ ազգեցութիւններից. նորա բռնած դիրքը այնպէս չէր որ խանգարէր կառավարութեան կանոնաւոր ընթացքը, միշտ մոտաբերելով դուքս Վելինգտոնի այս խօսքը թէ՝ «ամեն բանից առաջ պէտք է որ թագուհու կառավարութիւնը ընթանայ»:

Բայց այս գերջին տարիներս լորդերի ժողովը փոխել է իւր բնաւորութիւնը, ներկայացնելով պարզ ի պարզոյ մի մասնաճիւղ ծայրայեղ պահպանողականների ակումբի: Նորա մօտ 600 անդամներից միբերաները (յառաջդիմականներ) հազիւ 40 հոգի են:

Նա իւր բնաւորութիւնը փոխել է նաև մի այլ կողմով: Մինչեւ մօտ ժամանակներս հողատիրական արիստոկրատիան իրան անկախ էր պահում մեծ գործարանական արդիւնաբերութեան գործատչրերի և բանւորների ազգեցութիւնից: Արդարութեան ոգուց և մասամբ նոյն իսկ մի տեսակ նախագծից դէսլի կապիտալիստները, որոնք ներկայացնում են նոր ժամանակի իշխող և ղեկավարող տարրը, լորդերի ժողովը անցեալներում քէշարկել էր յօգուտ այն օրէնքների, որոնք հովանաւորում են բանւորների աշխատանքը:

Իսկ ներկայումս սեփականութեան երկու տեսակների՝ հողայինի և գրամականի ներկայացուցիչների մէջ համաձայնութիւն է կայացած երեսում: Ներկայումս լորդերը պաշտպան են հանդիսանում միաժամանակ թէ հողային սեփականատէրերի և թէ գործարանատէրերի:

Այսպէս ուրեմն լորդերի դէմ՝ կոիւը դառել է մի անհրաժեշտութիւն: Խնդիրը սա է թէ ինչ կասկ ունի դորա հետ Գլադստոնի հրաժարականը:

Ահա թէ ինչումն է այդ կապը: Իրլանդական ինքնավարութեան օրէնքը անպատճառ յաղթանակ է տանելու. այդ զգում են ամենքը. բայց քանի որ լորդերի ժողովը ներկայ կազմն ունի, այդ օրէնքը չի կարող ներկայ հանդամանքներում անցկենալ: Բայց ոչ միայն իրլանդական բիլլը այժմ չի կարող անցկենալ, այլ և ներկայ հանդամանքներում չեն կարող կատարւել նաև ուրիշ նոյնպէս շատ կարեռ և անհրաժեշտ վերանորոգութիւններ: Անդիման կանգնած է այժմ այն կէտի վրայ որ պէտք է յեղափոխութիւն կատարի. այդ նա կանի իւր ձեռով ռեփորտների միջոցով, ինչպէս նա արել է ան-

ցեալում, հակառակ մի քանի ուրիշ ազգերի սովորութեան, որոնք, փոխանակ ռեֆորմներով յեղափոխութիւն կատարելու, յեղափոխութիւններով ռեֆորմներ են կատարում:

Բաժանել Եկեղեցին Պետութիւնից Ուէլսի իշխանութեան մէջ և Շոտլանդիայում, նորից ընտրողական ռեֆորմ կատարել, տալ բաւարարութիւն բանւորական ընկերութիւնների (տրեդ-ունիոնների, trade-unions) պահանջներին, տալ ինքնովարութիւն Իրլանդիային—ահա լիբերալների այժմեան ծրագրի գլխաւոր կէտերը:

Այդ բոլորից այն խնդիրը, որը Գլադստոնի համար կատարելապէս հասունացել է, դա՝ իրլանդական ինքնավարութեան խնդիրն է: Մնացած խնդիրների հետ Գլադստոնը այնքան մօտիկուց ծանօթ չէ, նոցա բաւականաչափ չէ մշակել: Իսկ իրլանդական խնդիրը, ներկայ հանգամանքներում, չի կարող անցնել մէն մենակ. նա կանցնի, բայց որպէս կէտերից մէկը լիբերալ կուսակցութեան ամբողջ ծրագրի: Իսկ այդ ծրագրի հետ ի միասին պէտք է նախապատրաստել լորդերի ժողովի նոր կազմակերպութիւն:

Այդ ամենի համար Գլադստոնը, իւր 85 ամեայ հասակի ծանրութիւնը ուսերի վրայ՝ արգէն շատ է ծեր: Դորա համար պէտք են նոր սերունդ, նոր ոյժեր: Գլադստոնը, իւր հարժարւելովը ներգործական դերից՝ լիբերալ կուսակցութեան ղեկավարութիւնից՝ փակում է ոչ միայն իւր քաղաքական ասպարէզը, այլ փակում է նաև լիբերալ կուսակցութեան կեանքի, դորանով իսկ անգլիական ներքին քաղաքական կեանքի մի մեծ շրջան, այն շրջանը որ արդինք էր 1832 թւականի ընտրողական ռեֆորմի:

Գլադստոնը, ամենափառաւոր ներկայացուցիչը ցայժմեան անգլիական լիբերալիզմի, այն շրջանում, որ բացել էր 1832 թւականի ընտրողական օրէնքը, հեռանում է այժմ գործերից կատարեալ գիտակցութեամբ իւր մեծ անւան, հեղինակութեան և դեռևս գործելու ընդունակ ժամանակ: Բայց հէնց դորանով նա հասկացնում է այն քաղաքական կտակի լրջութիւնը, որ նա այժմ թողնում է իւր քաղաքական ժառանգներին, լինի այդ ժուռանզը իւր նշանակածը՝ լորդ Ռողբերին թէ մի ուրիշը: Բայց նա դատել է որ յարմարագոյն մարդը այդ կտակը կատարելու՝ իւր աշխատակից

և բարձր աղնւականութեան պատկանող Ռոզբերին է, որը իւր ծննդեան իրաւունքով՝ իբրև անգլիական պէտք անդամ է այն լորդերի պալատի, որի դէմ սկսք է սկսւի պատերազմը:

Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

II

Ի Տ Ա Լ Ի Ա

Երեք պետութիւններ այս վերջին երեք ամիսներս մանաւանդ ուշք դարձրին իրանց վրայ քաղաքական կեանքի անցքերով, որոնց կարեռութիւնը մեծ քաղաքական շահեր է լնդգրկում: Դոքա են Խոալիա, Գերմանիա և Անգլիա: Առաջինում՝ այն դրութիւնն է որ ստեղծւել է նորակազմ Կրիստինի մինիստրութեան համար ի դիմաց ներքին ապատամբական խոռվութիւնների Սիցիլիա կղզում և պետութեան այլ տեղերում, բայց մանաւանդ ի դիմաց այն ծանր ֆինանսական կրիզիսի, որի դէմ հերոսական կռիւ է պահանջուռ: Գերմանիայում՝ այն յաղթութիւնն է, որ տարաւ կայսերական կառավարութիւնը գերմանական-ռուսական մաքսային դաշնադրութեան խնդրում: Անդիլիայում՝ Գլադատոնի անալիկալ հրաժարականն է և Ռողբերին մինիստրութեան կազմելը, որի հետ կապ ունի ոչ միայն հին մեծ մարդու Փիզիկական անկարութիւնը, այլ անգլիական ներքին քաղաքականութեան մի նոր ֆաղիսի մէջ մտնելը:

Ինչ վերաբերում է Գլադատոնին, դորան մենք առանձին յօդւած նւիրեցինք վերեւում: Այստեղ մենք կանգ կ'առնենք Խոալիայի գործերի վրայ, որնք մեր ընթերցողների համար առանձին լուսաբանութեան կարօտ են:

Սիցիլիայի ապատամբական շարժումները պատահական չեն կարող համարւել: Նոքա բղխում են մի դժգոհութիւնից, որ ոչ միայն պարբերական է, ժամանակ առ ժամանակ կրկնւող, այլ և սուր կերպարանք է ստացել: Հաղիւ Կրիստինի նոր մինիստրութիւնը կազմակերպւած էր և ահա ամեն օր Սիցիլիայի մի որ և է տեղում ապատամբութիւն սկսեց պայմել աղաղակներով՝ «կորչի մաքսը, կորչի հարկը»: Եւ բնակիչների ու զօբքի միջև ընդհարումները դառնան անխուսափելի: Նոր մինիստրութիւնը, իրերի այդ դրու-

թեան մէջ, տւեց լիազօր իրաւոնքներ գեներալ Մորբա դի և աւրիանօ՞ին, հաստատելով այդպիսով այդ կղզում զինւորական կառավարութիւն, պաշարման դրութիւն։ Դա բնական էր, և երբ, մարտի սկզբին, իտալական պարլամէնտում վիճաւում էր այն բացառիկ միջոցների մասին, որոնց ենթարկւեց Սիցիլիան տարւաց սկզբում բոնկւած ապստամբութիւնների պատճառով, պարլամէնտը 342 ձայնով ընդդէմ 45-ի իւր հաւանութիւնը տւեց կառավարութեան այդպիսի վարմունքին, տալով նրան այդ բանի համար եղած առտակարգ մսիների վարկը։

Վերը մենք արդէն ասացինք որ Սիցիլիայում կրիզիսները պարբերական են, եւ այն, ինչ ընդհանուր նշանակութիւն է տալիս Սիցիլիայի ապստամբական շարժումներին, այն կազն է որ կայդոցա և Խոտալիայի ընդհանուր դրութեան մէջ։ Սիլիլիան մի վերին աստիճանի բարեբեր երկիր է, հոչակւած հին բարերից ի վեր։ Դա հին Տրինակրիան է, հին յոյնների այդ մենաշնորհեալ կղզին, որը շատ ազգեր աշխատել են իրանց ձեռքը գցել՝ Կարթագէնի ֆինիկիայիք, Սիկելիայիք, Հռոմայցիք, Արաբներ, Նորմանդացիք, եթէ խօսենք միայն հին ժամանակներից։ Ներկայումս նա, Միջերկրական ծովի այդ ամենամեծ կղզին, չորս վերսուաչափ նեղուցով միայն անջաւած Խոտալիայի ցամաքից՝ ունի մօտ 3 միլիոն 150 հազար բնակիչ, և բաժանւած է եօթ պրովինցիաների, Պալերմօ զլիսաւոր քաղաքով։ Հնումը նա աշխարհիս ամենահացաքեր և գեղեցիկ երկիրների շաբաթումն էր։ Ներկայումս այդ օրհնւած երկիրը ուոզւում է մի թուլամորթ ազգաբնակութեան քրամներով և արտասունքներով, մի ազգաբնակութեան, որը մսի համ չի տեսնում երբէք և ուտում է մի այնպիսի հաց, որից մի նմուշ նորերումն դրւած է եղել Հռոմի լրագիրներից մէկի բիւրօններում և որը զարհուրանք էր պատճառում նոյն իսկ Պարիզի պաշարումը կրածներին։ Հողային անտեսութիւնը այդ երկրում ամենաանտանելիներիցն է։ Վաշխառութիւնը դրականապէս կրծում է այդ ժողովրդին։ Հողը բաւական չէ որ տրւում է կապալառուների, վերջին ժամանակներս սկսել են երեալ բացի նոցանից նաև այլ տեսակ միջնորդներ սեպհականատէրերի և մշակողների մէջ, միջնորդներ, որոնք հողերը իբր գրաւ վերցնում են սեպհականատէրերից վաշխառւական տոկոս-

Ներով տւած պարտքերի համար։ Պաշտօնական նոր կատարած խուզարկութիւնը ցոյց տևեց որ Սիցիլիայում երկրագործական բանւորի օրական միջին վարձն է 60 սանտիմ (ոսկով հաշւած մեր 15 կոպէլը) և այն էլ տարւայ մէջ բանւորական օր հաշւում են միայն երկու հարիւր օր. իսկ պատգամաւոր Դէֆելիս իջեցնում էր այդ թիւը հարիւր վաթսունի։ Վաշխառութիւնը այնքան մեծ չարիք է, որ նախկին մինիստր նախագահ դի Ռուդինի, Սիցիլիայի ներկայ գրութիւնը բարւոքելու համար միայն մի գեղ է առաջարկում, այն է օրէնք վաշխառութեան դէմ։ Բայց բնական է որ դա բաւարար միջոց չի կարող համարւել. նորա ներգործութիւնը կարող է միայն հեռաւոր ապագայում երևալ, իսկ ներկան աւելի արմատական միջոցների է սպասում։

Այդ երկրում տիրող անոմալիաներից յիշենք նաև հարկային հանգամանքները։ Հարկերը այլոտեղ անտանելի են և անխիղճ։ Բաւական է ասել որ Սիցիլիայի համայնքներից 345 գիւղական համայնքներ վճարում են 22 միլիոն 218 հազար ֆրանկ ուստեստի հարկ, որ անում է ութ ֆրանկ ամեն մի գիւղական բնակչի համար, կամ 6% օրավարձ բանւորի ամբողջ եկամտի, մինչդեռ Խոալիայի շատ աւելի հարուստ պլրովինցիաներից Պիեմոնտում 1,133 համայնքներ՝ հաւասար ազգաբնակութեամբ՝ վճարում են միայն 17 միլիոն ֆրանկ, Վենետիկի պլրովինցիայում 771 համայնքներ՝ հաւասար թւով հարկատուներով վճարում են միայն 7 միլիոն 200 հազար ֆրանկ։

Դոքա պերճախօս թւեր են։ Եւ չպիտի զանց առնել նաև այն որ հարկահանները անողորմ են, և պէտք է վաճառել հունձը և անշարժ կայքեր՝ հարկի պակասորդը վճարելու համար։ Վերջերքում պատմւում էր Վալդուարնէրա գիւղացու մի դէպք. վերադառնալով դաշտից՝ նա իւր հետ բերել էր մի քանի կանաչեղէն։ Հարկահանը (Պտալիայում), որպէս նաև Ֆրանսիայում գոյութիւն ունի համայնական մաքս, որ վերցնում են մի ապրանք գիւղ կամ քաղաք ներմուծելու ժամանակ, և որը յայտնի է օշրօւ անունով), հարկահանը պահանջում է 35 սանտիմ մաքս։ իսկ գիւղացին ունէր ընդամենը 30 սանտիմ։ Եւ ահա առանց այլեւայլութեան խըլում է գիւղացուց սորա հագի շորը...

Զարմանալու չէ որ այդ համացնքում ժողովուրդը, մի քանի ժամփց յետոյ՝ ամբողջապէս ոտի կանգնեց...

Ինչ վերաբերում է երկրագործութիւնից դուրս աւելի երկրորդական արդիւնաբերութիւններին, այտեղ ևս, օրինակ ծծումքի արդիւնահանութեան մէջ՝ վրդովեցուցիչ բաներ են պատահում, որոնց վրայ կոմսուհի դէ Մէաթ (Meath) նորերում զգացւած խօսքերով հանրային ուշադրութիւնը դարձրեց:

Աւելցնենք նաև, որ ապստամբական շարժումներ տեղի ունեցան նաև Խոտալիայի մի բոլորովին ուրիշ տեղում ևս՝ Մասսա-Կարրարա պրովինցիայում (Ֆլորենցիայից արևմուտք-Հիւսիս), ուր նոյնպէս հաստատեց զինուորական վարչութիւն և պաշարման դրութիւն:

Փետրւարին արդէն կարգը վերականգնած էր ամենուրեք:

Սակայն մենք չենք ուզում փակել մեր տեսութեան այս զլուխը, առանց յիշատակելու. միջազգային քաղաքականութեան համար մի շատ բնորոշ երևոյթ։ Խոտալական թէև ոչ կարևորագոյն թերթերից մի քանիսը աշխատեցին Սիցիլիայի ապստամբական շարժում. ները կապել ոմանք Անգլիայի և ոմանք Ֆրանսիայի գաղտնի գիտաւորութիւնների հետ; Խրողութիւնը սա է որ մի շարք սիցիլիական համացնքներ խնդիրքներով դիմել էին Անգլիայի Վիկտորիա թագուհուն, խնդրելով յայտարարել կղզու վրայ իւր հովանաւորութիւնը և կղզին զնել այն քաղաքական դրութեան մէջ, որ կար լորդ Վիլիամ Բենտինկի կառավարութեան ներքոյ նապոլէոննեան պատերազմների ժամանակ, ներկայ դարուս սկզբին; Եւ իբր թէ Անգլիան, օգտական այդ պետիցիաներից, խրախուսում եղած լինի սիցիլիական ապստամբութիւնները...

Բայց այնքան էլ անմեղ չէր մի այլ մեղադրանք, որի համաձայն իբր թէ Ֆրանսիան, որի հետ Խոտալիայի յարաբերութիւնները, ինչպէս յայտնի է, բաւականին լարւած են այն օրից երբ Խոտալիան մտել է Գերմանիայի և Աւստրիա-Ռւսարիայի հետ եռապետական դաշնակցութեան մէջ, իբր թէ, ուրեմն, Ֆրանսիան իւր փողով նպաստում լինէր սիցիլիայի ապստամբներին, ինչպէս որ

հարիւր տարի առաջ, 1793 թւականին, Անգլիան էր իւր փողով նպաստում ֆրանսիայի դէմ եղողներին...

Աերջապէս գերմանացի սոցիալիստներին էլ ինդրի մէջ մտցրին, որոնք իբր թէ պէտք է գրգռած լինէին Սիցիլիացիներին թէ փողով և թէ այլ և այլ բրոշի ըներով...

Սակայն իտալացոց համար հայրենասիրութիւնը միակ այն կը լինէր, որ զրպարտութիւնների տեղ՝ հիմնաւոր ուշք դարձնէին արգէն հանրածանօթ սոցիալական և տնտեսական անտանելի հանգամանների վրայ...

Բայց պաշտօնական խոռ զարկութիւնները ցոյց տւին որ գաղտնի ընկերութիւններ Fasci անունով, այնու ամենաչնիւ դեր կատարել են:

Բայց եթէ վերը պատմած շփոթութիւններն էլ եղած չլինէին, Կրիստինի մինիստրութիւնը ունէր ծանր և շատ ծանր խընդիրներ լուծելու: Անցեալ տարւայ «Մուրճ»-ի վերջին համարում արգէն ասել ենք թէ որն է այդ ծանր ինդիրը. դա՝ ֆինանսականն է: Իրողութիւնը սա է որ Իտալիան, լինելով մէկը եւրոպական վեց մեծ պետութիւններից, չունի բաւականաչափ կարողութիւն իւր ծախսերը ծածկելու համար և այնու ամենաշնիւ նա իւր զօրքի վրայ պարտաւորած է համարում մախել մեծ գումար՝ մեծ պետութեան վայել զիրքի մէջ իրան պահպանւելու համար: Պետական բիւջէտի բացը հաւասար է լինում 100 միլիոն ֆրանկի, իսկ ներկայ 1894/95 բիւջէտային տարւայ համար, ինչպէս հաղորդեց հեռադիրը, ֆինանսների մինիստր Սոննինօն հաշւել է 177 միլիոն ֆրանկ, որ ամբողջ բիւջէտի մօտ $\frac{1}{10}$ է կազմում: Դա մի զեքիցիտ է, որից զարհուրել կարող է ամենահարուստ երկիրը: Եւ բացի այդ՝ կարծ ժամանակեայ պարտք պէտք է վճարել կէս միլիարդ ֆրանկ:

* Երբ Կրիստին, անցեալ տարւայ նոյնմըերին, կոչւեց երկրի կառավարութեան զեկը իւր ձեռքը վերցնելու, դա արգէն նշան էր զրութեան անելանելիութեան: Իսկ Կրիստին էլ իւր կողմից, տեսնելով թէ գժւարութիւնը ինչումն է, ֆինանսների մինիստր հրաւիրեց պ. Սոննինօն, որին ֆինանսական գործերում մեծ ձեռնախառութիւն են վերագրում: Բայց այն ծրագիրը, որ անցեալ ամիս

Սոննինօն առաջարկեց իտալական պարլամենտին—բաւարար լուծումն համարեց։ Դեֆիցիտը ծածկելու համար նա առաջարկում է մի կողմից խնայողութիւններ, միւս կողմից նորանոր հարկերի դիմել, մինչդեռ եղած հարկերի ծանրութիւնը անտանելի է համարում։ Խնայողութիւնները հաշւած են 45 միլիոն միայն, այսինքն գեֆիցիտի քառորդը։ Իսկ նոր հարկերով նա ենթադրում է ձեռք բերել 100 միլիոն։ Եւ այդ նոր հարկերից 17 միլիոնը ընկնում է ոչ-շինւած հողային սեփականութեան վրայ, որ նոյնն է թէ երկրագործութեան վրայ, այն, որի խղճալի դրութիւնը արդէն ամբողջ լուսաւոր աշխարհի խիզճն է շարժում։ Շարժական կայքերից պէտք է ստացւի նոր 52 միլիոն։ Գիւղական և քաղաքային համայնքները, որոնք հաղիւ հազ կարողանում են իրանց հաշիւները ծայրը ծայրին հասցնել, պարտաւորում են համայնական հարկերի մի մասը պետութեանը տալ։ Այդի հարկը որ առանց այն էլ ընդհանրագէս մի անիծւած հարկ է, աւելցրած է 8 միլիոն ֆրանկով։ Ժառանգութեան հարկերը համեմատագէս աւելի քիչ են աւելցրած, 4 միլիոնով միայն, մինչդեռ ներկայ ժամանակի ոգին աւելի այդ հարկի աւելացնելն է պահանջում։ Մի քանի միլիոն էլ սպասում են ալկոհոլից և այլն։

Վերջապէս Սոննինօն ստեղծում է մի ընդհանուր հարկ եկամուտների վրայ, որը յունւարից 1895-ի պէտք է տայ 10 միլիոն ֆրանկ։

Այս ծրագրին հետևում են մի շարք միջոցներ հասարակաց պարտքի և գանձարանի պարտքերը թեթևացնելու համար, դրամական դրութիւնը բարոքելու համար և թուղթ փողի մասին։

Իտալիայի ներկայ ֆինանսական դրութիւնը որ արդէն շատ տարիների սովորական վիճակն է, անկասկած յառաջացել է ոյժից վեր զօրք պահպանելուց։ բայց կան նաև այլ պատճառներ, որոնք ֆինանսական լինելով պակաս լոյս չեն սիւռում երկրի ներքին քաղաքական հանգամանքների վրայ։ Իտալական կառավարութիւնները սովորութիւն ունեն մեծ ձեռնարկութիւններից առաջ նախապատրաստել հասարակաց կարծիքը, յանձնարարելով մի հրապարակախօսի մինիստրական կարծիքները հրապարակ հանել։ Եւ շատ կարելի է որ այդ գրւածների բնաւորութիւնն է կրում անցեալ ամիս հրա-

տարակւած պ. Տուրիէլլօ՞ի մի բրոշիւրը «Պարլամէն տիրիզմը և ի տալիայում, որի մէջ կան էջեր նաև ֆինանսական խնդրի մասին» Տուրիէլլօ՞ն գործում է Խոտլիայի ներկայ ֆինանսական, տնտեսական, անգում բարոյական կրիզիսի գլխաւոր պատճառը այն քաղաքական տրանսֆորմիզմի մէջ (կերպարանափոխութիւն), որ կատարեց հանգուցեալ Դեպրետիս († 1887-ին), որ երրորդ անգամ մինիատոր-նախագահ նշանակւեց 1881 թւականին: Դեպրետիսը աշխատեց և յաջողեց քանդել պատմականապէս կազմւած կուսակցութիւնները, պարզութիւնները դարձնելով անհատական պատւախնդիրների ժողով, սկզբունքների տեղ շահեր զնելով, կարծիքների խըմբերի տեղ դնելով շահախնդիրների խմբեր: Այսպիսով պարլամէնտականութիւնը Խոտլիայում աղաւաղւեց և այդ գցեց երկիրը այն վիճակի մէջ, որից պէտք է այժմ դուրս բերել:

Զուգընթացաբար դորա հետ, Դեպրետիսը, ի հաճոյս տեղական շահերի և շահախնդիրների, ծրագրեց հազարաւոր վերստերի երկաթուղացին գծեր մի քանի միլիարդ ֆրանկ արժողութեամբ: Խոտլիայի ամենամեծ երկաթուղացին շինողներից մէկի՝ պ. Կոորանի հետ՝ Տուրիէլլօ՞ն հաստատում է որ դորանով ատեղծւեց 5 միլիարդ ֆրանկի պարագ, տարեկան 100 միլիոն երկաթուղացին բիւջէտով և 70 միլիոն ֆրանկ գեֆիցիաով. և այդ է որ Խոտլիայի ֆինանսների մէջ ահազին ծակ բացեց:

Երևի Սոննինօ՞ի վերը յիշած ծրագիրը կազմելու համար էր որ թագաւորական հրամանով սլարլամէնտի նոր բացումը, որ պէտք է տեղի ունենար յունւարի 25-ին, յետաձգւեց մինչ 20 փետրվարի (նոր տոմար). այդ յետաձգումը կատարւեց առանց բացատրութեան և միայն երկու օր առաջ քան պէտք է պարլամէնտը բացւէր: Պահանջւում էր մի փոքր խաղաղութիւն և հանգստութիւն՝ նախամտածելու համար միջոցների մասին ֆինանսական ծանր դրութիւնից դուրս գալու համար: Այժմ, երբ Սոննինօ՞ն իւր ծրագրի հետ արդէն ծանօթացրել է պարլամէնտին և ամբողջ երկրին, այժմ, ասում ենք, աւելի ևս պարզում է որ դրութիւնից դուրս գալու համար՝ իրօք որ պահանջւում են ոչ սովորական միջոցներ և բեֆորմներ:

Խնչ վերաբերում է զուտ հարկերին, նոցա հետ մենք արդէն

ծանօթացանք վերև։ Բայց կայ մի այլ խնդիր որի մասին մեզ
մնում է խօսել։

Ֆինանսական ծրագիրը ներկայացնելուց յետոյ Հումբէրտ թագա-
ւորի կառաւորութիւնը, լաւ ասած՝ Կրիստին, պահանջեց պարլա-
մենտից «լիազօր իրաւունքն եր»։ Այդ նշանակում է թէ կառա-
վարութիւնը կամենում է գործել առանց պարլամէնտի։ Այդ պահանջը
ամբողջ Խոալիայում գործեց ամենախորին տպաւորութիւն։ Պարլա-
մենտական կեանքում դա ամենեին չլուած մի բան է։ Միմիայն
ամենամեծ վասնգների ժամանակ կարելի է արգարացնել մի այդպի-
սի քայլ։ Դա մի տեսակ զիքտատորութիւն է։ Երեխ դրութիւնը
այնպէս է որ արգարացի է այդպիսի մի պահանջ։ Տեսնենք առա-
ջարկը ինչի մէջն է կայանում։ Առաջին յօդւածով տրում է թա-
գաւորին, մինխատրների պատասխանառութեամբ՝ լիազօր իրաւունք-
ներ։ Երկրորդ յօդւածով ստեղծւում է մի մասնաժողով, բաղկացած
հինգ մինատորներից, հինգ պատգամաւորներից և հինգ պաշտօնեանն-
երից— թագաւորին օգնական լինելու համար։ Եւ դոքա պէտք է նշա-
նակւեն թագաւորական գեկրէտով։ Երկրորդ յօդւածով յայտնւում
է որ յունւարի 1-ին 1895 թ. պարլամէնտը վերստին բացւելու ժա-
մանակ՝ կատավարութիւնը պէտք է հաշիւ ներկայացնի ազգային
ներկայացուցութեանը՝ կատարած գործերի համար։

Որ դա մի համարձակ առաջարկութիւն է, դորա մէջ կասկա-
ծել կարող է միայն պարլամէնտական պետութիւնների սահմանա-
դրութիւններին անձանօթը։ Պարլամէնտական երկրում մի տարի եր-
կիր կառավարել առանց պարլամէնտի— դա չլուած բան է։ Ոչ ոք
ի հարկէ չէր կարող մի քանի ամիս առաջ կարծել թէ այդպիսի
մի խնդիրի առջև դրւած կը լինի Խոալիան։ Բայց միայն այսքանը
յայտնի էր որ Կրիստին, և միայն Կրիստին բաւականաշափ քաջու-
թիւն կունենայ որ և է համարձակ գործ կատարել ներկայ Խոալիա-
յում։ Նորա անվեհերութեան մասին մենք այս կարծիքն ենք յայտ-
նել անցեալ տարւաց դեկտեմբերին, թէ երկրի Փինանսները կանո-
նաւորել Խոալիայում։ Հնարաւոր է միայն զօրքը պակսեցնելով։
Աեծ քաջութիւն է հարկաւոր զօրքի պակսեցնելը գլուխ բերել։
Բայց այս ևս հաստատ է որ եթէ կայ Խոալիայում մէկը,
որ այդպիսի մի քաջութիւն կարող է գործել առանց

վախենալու—դա սկսածին է (տես «Մուրճ» 1893 № 12, էջ 1942):

Կրիսպին պահանջում է «լիազօր իրաւունքներ» մինչ 1895 թ. յունարի 1-ը այնպիսի արմատական գործեր կատարելու համար, որոնց իրագործելը նա, հոտալիայում գոնէ, անհնարին է համարում, եթէ միաժամանակ մինհատրութիւնը դրւած լինի անհրաժեշտութեան մէջ պարլամէնտի վիճաբանութիւններին մասնակցել, այլ և այլ կուսակցութիւններին ընդդիմագրել, կուսակցական ինտրիգաների դէմ առնել և այն, մի խօսքով՝ եթէ նա սովորած լինի միաժամանակ նաև պարլամէնտական քաղաքականութիւն բանեցնել:

Լիազօր իրաւունքներ ձեռք բերելով՝ Կրիսպին ցանկանում է քաղաքացիական և զինուորական վարչութիւնների մէջ մեծ փոփոխութիւններ անել, այդ վարչութիւնները աւելի արժան նստացնելու համար պետական գանձարանին։ Եւ որովհետեւ այդ փոփոխութիւնները պէտք է շօշափին բարձրաստիճան բազմաթիւ անձերի և տեղական համայնքների շահները, այդ պատճառով է երևի Կրիսպին ցանկանում, որ այդ գործը կատարել պահանջամտութեան պարլամէնտի, որի անդամներից շատերը այդէս կամ անպէս կապւած են այդ անձերի և տեղական շահների հետ։

Սրդարեւ սա հաստատ է որ միացած հոտալիայի համար (իսկ նա միացած է 1859 թւականից սկսած) կառավարչական և դատաստանական մեքենայի անիւնները շատ շատ են։ Այդ իրողութիւնը ոչ միայն նկատած է, այլ և այնքան ճանաչւած է, որ երկաւ անգամ այս վերջին երեսուն տարիների ընթացքում, եթէ չենք սխալ ուսում, սուածին անգամ 1861-ին, երկրորդ անգամ 1891-ին, իտալական պարլամէնտին ներկայացրած է եղել վարչական և դատաստանական ատեանների բնֆորմը։ բայց այդ նախադերը երկու անգամ էլ դուրս են եկել պարլամէնտից՝ ճիշճած, աղաւաղւած շնորհիւ այն բանի, որ անհնարին է եղել զիմագրել ճնշմանը այն բազմաթիւ պատգամաւորների, որոնցից ամեն մէկը ուղեցել է իւր գաւառի ատեանները պահպանել ի վեսա պետական բիւջէտի։

Բայց որբան ախուր բան է մտածել որ մի մեծ երկրում, ինչ պիսին հոտալիան է, մէկը այն մեծ պետութիւններից, որոնք աշխարհիքի քաղաքականութիւնն են կառավարում, այդպիսի մի երկ-

րում, ասում ենք մենք, հարկաւոր է դատում զիքտատորութեան դիմել ներքին բժիշկութեամբ կատարելու համար, որովհետեւ, վերջի վերջոյն, ինչ բան է «լիազօր իրաւունքների» պահանջը, եթէ ոչ դիքտատորութիւն...

Մարդու հաւատալը չի գալիս թէ մի որ և է երկու տասնեակիլիմոն ֆրանկ խնայելու նպատակով անհրաժեշտ վարչական փոփոխութիւններ անելու համար՝ այդպիսի արտասովոր քայլին դիմելը հարկաւոր լինէր: Թէ գուցէ Կրիստին մինիստրութիւնը ինկատի ունի նաև զօրքի կրծատումը, որի մասին նա ոչ մի խօսք չի յայտնել և խոյս էլ է տալիս բան ասել. և բացի դորանից՝ նորա ենթադրած փոփոխութիւնները աւելի մեծ ծաւալ ունեն քան ինչ յայտնել է նորա ճառերից: Սա հաստատ է միայն որ Կրիստին ապակենորոնացման սկզբունքի պաշտպան է եղել անցեալում: Նա յայտնում է որ ներկայ կենտրոնականութիւնը (centralisation) միանգամայն հակառակ է իրավական դարեւոր աւանդութիւններին և որ դա մի պարսաւելի ժամանգութիւն է օտարների (նապոլէոնի) միջամտութեան իրավական դրծերի մէջ, դարուս սկզբում: 1887-ին Կրիստին արտասանեց այս հոչակաւոր խօսքը—վերի ծայրում՝ միապետութիւն, հիմքում և տեղական հիմնարկութիւններում՝ հանրապետութիւն: 1889-ին Կրիստին դրվամբ նուալիայում մոցրւեց համայնքի և պրովինցիայի (գաւառի) ինքնավարութիւնը:

Սակայն աւելցնելու է, որ Կրիստին, հետեւելով իւր համանասիրական ընաւորութեանը, չնայած ապակենորոնացման քարոզին՝ մինիստր եղած ժամանակ խլեց քաղաքային ինքնավարութիւններից ոստիկանութիւնը և քաղաքացիական պահապանների պաշտօնը ջնջեց:

Լիազօրութիւնների առաջարկը իսկոյն ընդունեց պատգամաւորների ժողովում մի մասնաժողովի քննութեանը ենթարկելու համար: Հետեւանքը կը հաղորդենք իւր ժամանակին: Սակայն պէտք է կարծել որ հեշտութեամբ նա չի ընդունւիլ պարլամէնտի կողմից—եթէ երբէք նա ընդունւի: Այդտեղ պակաս չեն մարդիկ որոնք միշտ պատրաստ կը լինեն Կրիստին հետ կուի մտնելու: Նիկոտերա, Յանարդելի, դի Ռուզինի, Զիոլիստին անգամ կը դրծեն: Ի գէալ յիշենք որ պատգամաւորների ժողովի նախագահ (փետրւարին) ըն-

տըրւեց Բիանքերի, որը թէև մեղմ բնաւորութեան տէր մարդ է (և 70 տարեկան), բայց և այնպէս կուսակցական տեսակէտից պատկանում է այն խմբին, որի գլուխը դի Խուզինին է։ Բայց անկարեով չէ իմանալ որ Ցանարդելին, որը բարեկամ չէ Կրիստինին, սաացաւ պատգամաւորների թւի կէսից միան չորս ձայն պակաս:

Z.

Յ. Գ.—Այն մասնաժողովը, որ կազմէել էր յօդւածում յիշած լիազօրութիւնների խնդիրը քննելու համար, իւր անդամների ձայնների մեծամասնութեամբ՝ վճռեց մերժել կառավարութեան առաջարկութիւնը։ Հաւանական է որ պատգամաւորների ժողովն էլ նոյն կերպ կը վերաբերւի խնդրին։

Z.